

ԱՄԵՐԻԿԱ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՈՐ ԱՐՄԵՆ

5507 ՏՄԻՒՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 17

17 ՄԱՐՏ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մշտնրականներու Չփոփոխեան Հարցը

ԶԱՊԷԼ ԷՍԱՅԵԱՆ

Արուեստ Բերքողական Պուլայի

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Օգրավ Միույն

ՏՕՄԻՆՕ

Յալիսեանական Երազը

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Երկուսն մէջ խորին...

ՄԻՍԱՔ ՄԵՇԱՐԵՆՅ

Նոր Գիշեր

«Մասիս»ի Հարցումը

Գրական եւ Գեղարուեստական

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍԳԱՅԵԱՆ

1907

ՊԱՆՔԱՆ

ՍՈՍՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000
Վերադաճողագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,00

ՊԱՆՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ դիսաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիններով և պայմաններով օժտուած է. կը կտտարէ խառն ապահովա- գրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
Ղալաթիա, Տեօյլէ Սրիէնդ Պանքի կից, Սրնասոն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իսթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրաւաճառներու քով.
Կեդրոնատեղի Աշտեան գրատուն:

Ընտանեկան Դադանիքներ 3 հատոր 15 զր.

Արեւարձանին Տղան 3 հատոր 15 զր.

Հանրակառքին Ռճիրը 5 զր.

Ամուսնութիւնը Բարիդու 5 զր.

Բաղաքական Տեսեսութիւն. Ժողէֆ Կառնիէ 5 զր.

Գ. ԶՈՐԵԱՆ ԵՒ Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Դաւառացիներուն. — Եթէ կը վախաքիք որ տեսնուին Ձեր առեւ- տրական, կալուածական եւն. եւն. գործերը՝ փորձառու և վստահելի գործակալտարի մը միջոցաւ, առիթէն օգտուելով դիմեցէք վերոյիշեալ հասցէին «Կ. Պոլիս Էթմէքճի Կոօտ Խան» ուր կը կատարուին ամէն կարգի վաճառքներու ինչպէս նաեւ կալուածներու դնման կամ վաճառ- ման յանձնարարութիւններ, ճշգրտապահութեամբ, փութկոտութեամբ: Յաճախորդներու հաշուին միանգամայն կը դնուին (ներածութիւն) եւրո- պական վաճառքներ, պատիանեալ նաւահանդիստը յանձնելի փոխար- ժէքով, ու կը վաճառուին (տրամադրութիւն) տեղական բերքեր՝ իր տեղը կամ ալլուր յանձնելի պայմաններով: Խիստ դիւրամատչելի պայմաններ: Ընդարձակ անգիկութեանց համար դիմել վերեւի հասցէին:

Ք Օ Պ Ր Ա

Կենցաղագիտութեան էական պահանջներէն մէկն է կօշիկները ներկուած պտտիլ միշտ, ոչ թէ փո- ղօցը ներկել տալով դանոնք, այլ տունէն դուրս ելած ատեն իսկ՝ նա- խապէս անձամբ կամ սպասուհիին միջոցով ներկել տալով: Այս նպա- տակին համար ամբողջ աշխարհի մէջ լատափոյնը հռչակուած ներկն է՝ ԲՕՊՐԱՆ, զոր կարելի է գտնել ամէն տեղ:

ԳՐԱԿԱՆ ԽՆՁՈՅԻՒ ՍԱՐԳՈՒԱԾ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԵՐՈՒ
ԿՈՂՄԷ՝ ԸՆԹԵՐՅԱՍԵՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ. — «Բարեկամ ամենեցուն».
Տօքթէօս Յակոբոս Կիրակոսեան. գին 15 ղրշ. «Առձեռն Նամականի»
(7): «Նշանագիր հայ. և գաղ. մարքայի համար. Խ. Մ. Թահ-
տահեան» (5) «Թալուք պէսլէմէք» Մ. Էմբրեան (5). «Լքուած
Քնար» Արտաշէս Յարութիւնեանի (5): «Թէ ի՞նչպէս պէտք է պարել»
Միհրդատ Ն. Պարոնեան (5) «Հիւժախտի դարմանը» Տքթ. Յ. Ա.
Գնահեանի (3 1/2): «Երջանիկ մարդ մը» Կասթօն Պէրմրէ (5): «Մանր
ուսմունք երկրագործական տարրարանութեան և երկրաբանութեան»
Ժ. Յ. Վ. Զօհնաթըն» (4): «Րօպէնսօն» (4): «Ժողովրդական Տարեցոյց»
1907 (3): «Ընկեցիկը» (բարոյական վէպ) (2): Այս 12 հատոր վիպական,
առողջապահական, բանաստեղծական ևն. գիրքերը, փոխանակ 60 ղրշ. ի
կարելի է ստանալ միայն 20 ղրշ. ի փոխարէն Զարդարեան եղբայրներու
գրատուններէն. գաւառներու համար 7 ղրշ. աւելի, իրր փողի ծախք:

Հասցէ. Զարդարեան Դրասուն, Պոլիս Զամախճըլար, 22 — 23

ՀԻՆ ՕՐԵՐ. — ՊՈՒԷՏ ԽԱԶԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ԺԱՄԱ-
ՆԱԿԱՅԻՑ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՅԻՆԵՐ. — Յ. Գ. Մ. — Այս
կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սաքաեան
տպարանէն՝ 140ի Հափ էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսու-
թիւններով: Կը գտնուի բոլոր գրադատներուն քով. գին 1/2 ղրշ.:

Զարդարեան գրատուններու ասրքած գրական խնջոյքէն մեծ խնդ-
րանք մը ըլլալով՝ կը ծանուցանեն որ անկէ նպաստաւորուիլ փափա-
քողները պէտք է փութան իրենց յանձնարարութիւններուն, գիրքերուն
սպառումէն առաջ:

ՀԱՒԱՔԵԼԻ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ. — Եթէ
վաճառել ուղուած հաւաքելի նամակադրոյմներ ունիք, դիմեցէք Կ.
Պոլիս, Ղալաթիա, Տէմիր-խան, թիւ 25 հաւաքելի նամակադրոյմի
վաճառական՝ Մարտիրոս Էֆ. Արայճեանի, որ դռնացուցիչ գիներով կը
գնէ: Եթէ նամակադրոյմի հաւաքիչ էք և կը փափաքիք ձեր հաւաքա-
ծոն ձօնացնել՝ դիմեցէք դարձեալ Մարտիրոս Էֆ. Արայճեանի, որ
գիւրամատչելի գիներով կը վաճառէ՝ ամէն տեսակ հաւաքելի նամակա-
դրոյմներ: Այս գործողութիւնները կը կատարէ թղթակցութեամբ ալ:
Պէտք եղած առեւն Կ. Պոլսոյ յաճախորդներուն կ'այցելէ՝ նամակա-
դրոյմներու գնման և վաճառման համար, եթէ կանխաւ յաճախորդներ
իրենց հասցէն և փափաքը յայտնեն՝ 10 փարանոց քարթ-քօպըալով մը:
Առանց որ և է փոխարինութեան նամակադրոյմներու գնահատում:
Հասցէ՝ Մարտիրոս Արայճեան, Ղալաթիա, Տէմիր խան թիւ 25 Կ. Պոլիս:

Դիճ. — Նամակ գրողներէն կը խնդրէ իրենց հասցէն յստակօրէն
գրել:

«ՄԱՍԻՍ»-Ի ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Մեր Դ. Հարցու մին թէ՛

Նշանածնիդ ծովն ե ինկած եւ կը խեղդոյի ի՞նչ պէտք ե ընեմ.
պէտք ե շուռ հանդիսասէն մտաք քե ծովը հետնիք
ստացում պատասխաններէն կը հրատարակենք հետեւեալ ամէնէն սրա-
միտը, որուն տէրը կը ստանայ զեղեցիկ բօքք ֆեռլ մը:

Պատասխան. Երբ ծովը ինկողը կին մըն է՝ մակուկաժարներ ինձի
առաջ... փութացած կ'ըլլան արդէն թողէք որ չըջագեատը ուռելով՝
իրը ազատարար դօտի կը փրկէ զինքը անպատճառ: Երջագետը ինչ
չըներ որ... Սեդրակ Մարգարեան:

Ե. Հարցում. — Մեր աղջիկները, ընդհանուր առումով, գրականու-
րեանն սեր կրնան տալ տեղի, քե նրաժշտութեան եւ ինչո՞ւ: (Պատաս-
խանները պէտք է կարճ ու սրամիտ ըլլան: Կ'ընդունուին մինչեւ չորեք-
շաբթի իրիկուն: Նուէր՝ Լաուրա Քառարան մը):

«ՄԱՍԻՍ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ. — Տիար Յակոբ Գույումճեան. —
Ստացանք ներքին փոխարժէքը Ձեր բաժանորդագրութեան: Կը սպա-
սենք Մասիսի նուիրուած ձեր ջանքերուն արդիւնքին:

Տիար Հայրապետ Ժամկոտեան. — Ծնւդ է թէ ժամանակին արձա-
նադրուած էք ձեր բաժանորդագրութեամբ Մասիսի եւ իրաւունք ունիք
ստանալու նուէր հատորներ, բայց ձեր ընտրանքը մեզ տեղեկացուցած
չըլլալնուդ է որ չենք կրցած զրկել: Կը ստանաք երբ իմացնէք Ձեր
ընտրանքը:

Տիար Գ. Էօրէճեան. — Կը սպասենք Ձեր խոստումին: Թերթերը
զրկուցան թիւ չէն: Նուէրներու յայտնումը կը գտնէք մէջը:

Տիար Թ. — Կ'ուզէք որ բանաստեղծութիւններդ ծածկանունով հրա-
տարակուի՞ որպէս զի անոր սիրային հանգամանքէն չգայթակղին Ձեր
ուսուցիչները: Ուրիշ՝ ստեղծեր էք այդ մտատանջութիւնը. դպրոցէ
դուրս կրնաք ձեր սիրունիին հետ գարեջուր խմել, վարժապետնուդ
դիմացը:

Տիար Գ. — «Տխուր եմ» գրուածքը Մասիսի ուղղութեան անյարմար
է: Կը ցաւինք որ չենք կրնար գտնացնել ձեզ քաջալերելու ձեր առաջարկը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծնորհակալութեամբ ստացանք Ձեր բաժանորդագրինք. Ն. Ս. Օձ.
Տ. Սահակ Կաթ. Խաչատեան, Տ. Գէորգ Արք. Երէցեան, Տ. Գարեգին
մրդ. Խաչատուրեան, Տ. Կորիւն վրդ. Եսայեան, Տ. Արտաւազդ վրդ.
Գայէնտէրեան, Տեարք Վսեմ. Հրանտ Խան Շամտանճեան, Մարտիրոս
Նիկողոսեան, Դրիգոր Պողոսարեան, Մկրտիչ Պօղոսեան, Մինաս Ծալ-
եան, Սիրական Գլըճեան, Յարութիւն Դարբինեան, Երուանդ Փիրում-
եան, Յակոբ Գույումճեան, Խաչատուր Փէլթէկեան, Սեդրակ Տ. Պաղ-
տատարեան, Կարապետ Մուսեղեան, Յարութիւն Նազալեան, Ժողովրդ.
ընթերց. Վան): (Դի՛ճ. Ձեռն արձանագրուիր այն բաժանորդները՝ որոնք
մասնաւորակառու ժով մը կը յայտնեն իրենց այդ փափաքը, ինչպէս շատեր
ըրածեն մինչեւ հիմա):

ԽԱՄԻՍ

Ծ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

5507 ՏԱՐԻ.ՆՈՐ.ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

17 ՄԱՐՏ 1907

ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶՔԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ



Աշխատող դասակարգին չքաւորութեան հարցէն ետքը, շատ աւելի անձկալի ուժգնութեամբ մը կ'ուրուագծուի մտաւորականներու չքաւորութեան հարցը։ Անիկա դեռ իր տրամաբանական և արդար ճշմարտութեան մէջ է, որովհետեւ դեռ ինքնակոչ փաստաբաններ զայն ձեռք չեն առած, չեն սանձադաշտ, չեն բանաձեւած և ինչպէս գրեթէ միշտ՝ զայն չեն խղզած ապարդիւն վիճարանութիւններու և իմաստականերու յատուկ մոլեռանդութեան մը մէջ։ Դեռ անիկա բարասուռն է իր օրինաւոր պահանջումներով և իր ձգտումները կազմուած են մեր ամէնուս սրտին մէջ գոյութիւն ունեցող փափաքներով։

Մտաւորականներու չքաւորութիւնը նոր չէ բնականաբար. քաղաքակրթութեան ամէնէն հին շրջաններէն արձագանգը կը հասնի մեզի այն պայքարին՝ որ գոյութիւն ունեցած է միշտ նիւթին և մտքին միջեւ։ Հին մտաւորականները աւելի համեստ էին. չքաւորութեան հարցը լուծած էին մասամբ իրենց կեանքի պայմանները վերածելով իր ամէնէն պտորդ ձեւին. ասիկա տեսակ մը խաբուսիկ խաղաղութիւն յառաջ բերած էր ունեցողին և չունեցողին մէջ, ուրկէ առաջիններուն նկատմամբ վերջինները արհամարհական հպարտութիւն մը պահած էին։ Արեւելեան

ցեղերու գրականութեանց մէջ յաճախ կը տեսնենք այդ արհամարհանքին հետքերը. արարական առածներէն մեծ մասը լեցուած են անով. երջանիկ ատեններ... Անոնք որ բան մը չունէին, ինքզինքնին կը դոհացնէին խորհելով թէ՛ ունեցողները զիրենք չեն արժեք ու տարիներով մխիթարուած են այս մտածումով:

Աւելի ոչ սակայն, մասնաւորապէս Վերածնութեան ժամանակ՝ կեանքի պահանջները, ճոխութեան և վայելքի տենչանքը, այնքա՛ն ուժգին մանաւանդ արուեստագէտներու մէջ, ուրիշ ուղղութիւն տուած են իրենց զգացումներովը: Աւելի քծնող, համակերպող դարձած են, սիրայօժար համաձայնած են ժամանակին մեծամեծներուն վարձկանը ըլլալ. եթէ Թիցիանոս մը քմահաճ և խրոխտ եղած է և ինքզինքին ազատութիւնը տուած է ապսպրուած նկարները իր ուղած ատենը յանձնելու, Տա Վինչիի գրեթէ ողորմութիւն խնդրելու չէ քաշուած: Իր Դուքս տը Սթրոցալին գրած նամակներուն մէջ կը գտնանք սապէս տուելի. «Գործաւորներուս վճարելու դրամ չունիմ. հազուսաներս անդործածելի են. գո՛հ պիտի ըլլայի եթէ շնորհը ընէիք ձեր հինցած հազուսաներէն զրկելու»: Էապէս սակայն ինքնագիտակից իր արժէքին, ծայրայեղօրէն հպարտ՝ երբ խնդիրը արուեստի վրայ է, նոյն իսկ ինքնահաւան և անով իսկ ամենակարող, Տա Վինչիի իր ժամանակին ամէնէն մեծ խառնուածքներէն մէկն է: Այն ատենու ան արուեստագէտներու կացութիւնը աղնուականներուն հանդէպ մասնաւոր հոգեկան վիճակ մը յառաջ բերած է իրենց մէջ՝ որ մեզի կը խրաչեցնէ այսօր. իրենց գերազանցութեան զգացումը թաքուն և ներքին զիտակցութեան մը վերածուած է՝ զոր յայտնել անխոհմտութիւն պիտի սեպէին. իրենց արհամարհանքը տարբեր ուղիի մը մէջ մտած և հոն լծացած մնացած է, ամուլ բանաձև մը եղած է ալ. որովհետեւ չփացած և յգիացած իրենց տէրերուն կողմէ, գրեթէ անոնց իրաւունքները վայելող, աղքատութեան բարիարար մտրակը չեն ունեցած որ միշտ զիրենք արթնցնէր իրենց մոռացութենէն:

Այսօր սակայն, ալ ո՛չ հին օրերու չիլիստիպալութիւնը և կամաւոր չքաւորութիւնը կարելի է, ոչ ալ Դուքս տը Սթրոցաներու և Մեկենասներու յոյսը: Ամէն քաղաքակիրթ երկիրներու մէջ ամէն աարի, բարձրագոյն դպրոցներէ ելլող ուսանողներու թիւ մը կայ, որ չզիտեր թէ ո՛ր կեդրոնացնէ իր գործունէութիւնը, իր աշխատելու բարոյական և նիւթական նկատքը, իր շահատենչ յոյսերը իրականացնելու փափաքը, փութաջանութիւնը՝ ամէն վայրկեան կը հանդիպին մեծ արգելքներու, որոնց կրկնութիւնը զինքը վերջապէս կը ջղագրգռեն, նախանձոտ ու հեգնող կը դարձնեն, զինքը կ'առանձնացնեն իր վիրաւորուած և դուրազած հոգարտութեան մէջ, մինչև որ վհապած, աղքատութիւնը օգնելով, անլրադառնայ որ տարիները կ'անցնին ապարդիւն և պէտք է

ապահովութիւնը ունենալ. երիտասարդ և նորահաս բանաստեղծներ չուտով յոյսերնին կը կտրեն իրենց երազներուն և իղձերուն արտայայտութեամբը ապրելէ. ու գէշը ան է որ՝ անոնցմէ ամէնէն տաղանդաւորներն են որ հպարտութեամբ կը լռեն, մինչդեռ միջակները իրենց թիւով օրուան նօթը կուտան: Յրանոսայի մէջ Սեմյոնիզմի ամէնէն փայլուն շրջանը ուժգին ըմբոստացում մըն է իրերու այս վիճակին դէմ. բայց ահաւասիկ որ իրենց ալ թափը կտրեցաւ. և իրենցմէ ալ դարձեալ ամէնէն աւելի օժտուածները չէին որ ամէնէն շատ աղմուկ հանեցին: Եւ եթէ բոլոր գրական աշխարհը ազդուեցաւ իրենցմէ՝ ատիկա անուղղակի կերպով մը եղաւ:

Մալարմէ, տը Ռէնիէ, Ռընէ Կիլ, Վէրհարըն՝ կղզիացած մնացին միշտ և երբեք ուղղակի կերպով մը իրենց մատները չաղտոտեցին յաջողութիւն ստանալու համար հարկ եղած աղմկալի և կասկածելի գործունէութեան մէջ. և դեռ յիշածներս ամէնքն ալ ընթերցողին առատաձեռնութեան պէտք չունէին ապրելու համար: Ի՞նչ ընէ սակայն բանաստեղծը որ իրենց հոգին ունի և իրենց եկամուտներէն զուրկ է. պէտք է լռէ՞ անիկա. պէտք է պայքարի՞. և ինչպէ՞ս. ահաւասիկ հարցը. այսօրուան կեանքի դժուարութիւնները, կնճռոտութիւնները բաղմակողմանի պահանջները մեր հոգեկան կացութեան, մեր օրինաւոր հպարտութիւնները նոյն խել, մեզի բնազդմամբ հեռու կը պահեն արուեստի պայքարէն: Քղանցքները ժողոված անցնելու համար ցիւստ փողոցէ մը՝ իր բազուկներուն պէտք ունենալու չէ. ապա թէ ոչ անխուսափելի է ցեխոտութիւնը:

Դարձեալ բանաստեղծը կամ նկարիչը գոնէ արտադրելու մխիթարութիւնը ունի. իրեն քիչ բան պէտք է. իր ծախքերը սահմանափակ են. և յաճախ կը բաւականանայ իր արտադրածին միայն ինքզինքը հանդիսատես կամ ունկնդիր ունենալով. յետոյ կեանքը թեթեւ և հաճելի օրեր ունի իրեն համար, ի՞նչ կացութեան մէջ որ ըլլայ: Մարդիկ վարժուած են զինքը աղքատ տեսնելու և իրենց չբաւորութիւնը ընկալելալ սովորութիւններու կարգը անցնելով՝ ներողամտութեամբ կը դատուի ու ամօթի մը կամ մոլութեան մը պէս զինքը չամիցներ դեռ: Բայց ի՞նչ ընէ անդին խեղճ գիտունը: Ահաւասիկ մէկը՝ որուն ներքի չէ աղքատ ըլլալ: Ինչի՞ կը ծառայեն մտացածին աշխատութիւնները հաւանականութեան հաշիւները որ և է գիւտ մը ընելու համար, երբ փորձերու ու արդիւնքի մը հասնելու համար մեծ դրամագլուխներ պէտք են: Յաճախ չպատահիր նաև որ վարձկան գիտուն մը որ և է գործարանագետի մը հաշիւոյն աշխատի, անոր յաջողութեան պատճառ դառնայ և ինքը իր համեստ ամսականներով մնայ, մինչ գործաւորները կ'ըմբոստանան և կը կարծեն իրաւունք ունենալ իրենց գործ հայթայթող դրամատէրին հասոյթներուն մէջ:

Եւ դեռ խօսքը չեմ ըներ բոլորովին խոնարհներուն, անոնց որոնք նոյնիսկ չպիտի համարձակէին ինքզինքնին մտաւորականներու շարքին մէջ դնել, համեստ պաշտօնեաները՝ որոնք գործաւորներու օրական աշխատանքին վաստկիր, այլ սակայն շատ աւելի կանոնաւոր եւ շահեկան կեանք մը կը վարեն. անոնցմէ շատերը կը կարդան եւ լաւ կը կարգան. իրենց զաւակներուն կրթութեան համար հոգ կը տանին, զոհողութիւններ կ'ընեն: Ի՞նչ կ'ընեն գործաւորները ինքզինքնին բարւոքելու համար. գրեթէ ոչինչ. իրենց հարցը մտաւորականներու վեհանձն մարդասիրութեան արդիւնքն է միայն: Մինչ գործաւորը իր պարապ ժամերը գինետոռնը կ'անցընէ, անդին համեստ, անտեսուած եւ գրեթէ արհամարհուած պղտիկ պաշտօնեան իր foyer-ին մէջ կը մնայ, իր զաւակներուն նիւթական եւ մտաւորական վիճակովը կը զբաղի: Ո՞վ կը գիտնայ իր անձկութիւնները, պատշաճութեանց եւ բարւոքման հոգերը՝ որոնք չեն համեմատիր իր ամսականին հետ: Յաճախ գիշերն ալ կ'աշխատի որ եւ է շահեկանութիւնէ զուրկ գրաւոր գործերով եւ երբ հեւ ի հեւ կեանքին անսովոր յոգնութիւններէն, գործատեղիին ապուշցնող եւ մեքենական աշխատութենէն՝ որ յաճախ շարունակական սեւեռեալ ուշադրութիւն կը պահանջէ եւ կ'անդամալուծէ իր մտքին ուրիշ կարողութիւնները, երբ անկար, տոճոյն ու վատառողջ դառնայ եւ ուղեղի անարկունութեան հետեւանքով ապուշի երեւոյթ ստանայ, վերջապէս, ի՞նչ կ'ընենք իրեն. զինքը կը ծաղրենք՝ իր տոճունութիւնը եւ ապուշութիւնը երեսին կը դարնենք, զինքը մեքենայ կը կոչենք, զուրկ որ եւ է անհատականութենէ. կը հեգնենք մինչեւ իսկ իր *puéril* եւ համեստ հոգիին գործ-վանքները. իր սէրը անտի եւ անարժէք բաներու՝ մեղի ծիծաղելի կ'երեւայ. իր սեղմուած, ճնշուած, իր ամէնէն պղտիկ համեմատութիւններուն վերածուած հոգիին նախասիրութիւնները փցուն ու տղայական կը դառնանք: Մինչ անդին կը հիանանք գործաւորին բռունցքի կոպիտ ուժին վրայ եւ կ'արգահատինք իր մոլութիւններուն, իր վատութիւններուն, անոնց պատասխանատուութիւնը ձգելով վեհանձնօրէն ուրիշներու վրայ:

Գործաւորներու հարցը ալ գոհացուցիչ օրականի մը եւ քիչ կամ շատ աշխատութեան ժամերու խնդիր մըն է: Ինչո՞վ աւելի շահեկան կը դառնայ քան մտաւորականներու չքաւորութեան հարցը. այս վերջինը իր բաղմադիմի եւ կնճռոտ կողմերով, իր կարեւորութեամբը իսկ՝ ամէն ցեղերու կեանքին մէջ օրուան ամէնէն անմիջական եւ հրատապ հարցը պէտք է դառնայ, եւ ասիկա կարծեմ մերձաւոր բան մըն է ալ:

ՀԱՊԷԼ ՆՍԱՅԵԱՆ

Յ. Գ. Մամբրեան հրահարակութեան համար հեզի յանձնած է Պուաշոի «Բերրողական Արուեստ»-ին Ա. Դյուիսին քարգնամութիւնը, զոր կատարած է 1877ին եւ զոր կը ներկայացնենք ընթերցողներուն, իբր շահեկան հասնում մը գրաքար քարգնամութեան, որուն նիւթն ալ նոյնչափ նշանակելի էջ մը կը կազմէ փրանսական գրականութեան մէջ, ըլլալով հեղինակին մէկ գլուխ-գործոցը, նախապէս աշխարհաքար հայացում նաեւ Վիեննայի Միսիքար-եաններէն եւ գրաքարի՝ կարծենք՝ Ռ. Յ. Պերպերեանէ:

ԱՐՈՒԵՍ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ՊՈՒԱՆՈՅ ՏԷՐԵՕՅԷ^[1]

(Թարգմանեալ ի Ֆրանսական բնագրէն ի Յ. Գ. Մամբրեանէ)

Ե Ր Գ. Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ե^[2]

Զո՛ւր ի Պարնաս ձգնի խիզախ բանարար
Ժաման տալից դոյ արուեստին ի կատար,
Թէ գերկնայինն աւիւն չըզգայ ի հոգւոյ
Կամ բախտադիրն արիւի առ այն չառնէ կոչ.
Նա ի կոպար անձուկ մըտացն աղիւնալ կայ,
Անթուիչ Պեգաս՝ Փեքոս անլուր է նըմար:

Հապա՛, վարեալքդ յեռանդն ըստէպ ոչ անքոյթ
Դեղարուեստից ընդ ասպարէզ դժուարուտ,
Մի՛ դուք վանգից ի չափս հաշիք վայրապար՝
Յաւէտ բերումն հանճարոյ ձեզ համարեալ
Ըզտենջ յանգից, նա՛ և ի սուտ բերկրանացդ
Եւ ի պատիր փախի՛ք խայծիցդ ճն ի բաց.
Թէ ի՛մ տանել միտք և կորով ձեր՝ ի ձիւ
Միտ եղեալ միշտ, և պարապով զննեսջիք:

Ծանօթութիւնք գրեալք յամին 1907. ^[1] Յառաջ քան զՊուաշոյ՝ քաղուստ գոյին առ Փրանսացիս հառք յաղագս ֆերրողական արուեստին, որոց հնագոյնքն եւն անուանեալքն Ռուրասուն եւ Ծաղկունք Հոնեսորականք յէս որոց ծաւնիւ չափ ֆերրոյք ի նոյն քերին պարսպ: Այլ այս գործ Պուաշոյի՝ անհամեմատ գերազանցէ քան զամենեւին:

^[2] Վոյքեր անուանէ զայս երգ Պուաշոյի՝ ֆերրում զարմանալի եւ ի վեր քան զԲերրողականն որսեսան. նոյն ինքն ասէ՝ յէս ֆննողական ինչ քանից. «Ի քաց առեալ զոյրերգութիւնս Ռասինի՝ այս Արուեստ Բերրողական Պուաշոյի՝ է գործ քան զամենայն գրական գործս պատուաբեր փրանսական քարքառոյց»:
— Իցի՛ւ անխա-
կան հասակիս մերոյ այս խում քարգնամութեան ի պատուական շեզու մերս նախնեաց՝
յաշողեալ էր անդ ուրեմն գէթ չնուագեցուցանել զպատիւք քնագրական եւ զպար-
ծանս շեզուի մերում նախնականի:

Առաան ի տուրքս հանճարոյ բընութիւն
 Անձնիւր ումեք պէսպէս կշռէ ձիր ուրոյն,
 Ոմն ըզսիրոյ ճարտար ոգել ըզբորբոք,
 Երգիծական ի թեքել սուր տողս ա՛յլ ոք՝
 Զըւարթարար կերպս ի հանդէս ածելով,
 Մալէրպ զարեաց առնու զմըրցանս քաջ ի գով,
 Եւ պուրակաց երգիչն անդուստ ինք Ռաքան
 Նուագէ զՓիլիս և ըզկենցաղ հովուական.
 Այլ ոմն աջող իսկ հանճարով բայց հըպարտ
 Ապախտ զաժխոյժ մըտացն առնէ տարապարտ.
 Զորմ պանդոկին Ֆարեայ^[3] ծանօթըն քերթող^[4]
 Տաղից երբեմն ինք մըճոտէր յանդէպ տող,
 Զխորայէլեան երգեալ զելիցն յաղթանակ
 Զանճաճն և զճահ փողէր ի բան արտանուագ,
 Ու՛ ընդ անապատըս Մովսիսին համահետ
 Ընկաւ յալիս ընդ Փար՛ւոնի ետ ընդ ետ:

Ըսթափական նիւթ կամ վըսեմ թէ քերթած
 Առցէ տողել ոք ի տաղից յօրինուած՝
 Ըզբանն և զյանգ լըծորդեսցէ զուգայար
 Զընգւայր թըւեալսն անհաշտելի ու՛ անյարմար.^[5]
 Նա՛ զի ծառա՛յ յանգն է բանին հարկեւոր
 Թէ միտք ի գիւտ նորին են վարժ և սովոր՝
 Ըզդժուարինս տակաւ ճգամբն հարթելով,
 Եւ ընդ բանին խոնարհեալ յանգն ընդ լըծով՝
 Փոյթ ու՛ անըմբոստ մատուցանէ նըմա սպաս.
 Այլ թէ ի խոյզ նորին յառաջն յուլանաս՝
 Դառնայ ընդդէմ, և զրախընդիր անդ ըզհետ
 Պընդին յանգից իմաստքդ ընդոստ միշտ յաւէտ:

[3] Ցարե՛ հեղինակ գրոյն Այր պարկեթս, որ եւ եր քարեկամ Սեւ-դ-Ամանայ:

[4] Այդ ֆերրոյ՝ ե Սեւ-դ-Աման, Հեղինակ Մովսէս-Փրկեալի:

[5] Թե՛ պանգն եւ բանն (raison) կարե՛ն յծորդիլ միմեանց առանց երկուսեւ
 վնասուո ի հին ժամանակաց եւ այսր վե՛ս եւ առ օտարացնեայս, եւ ի մեզ իսկ
 ոմանք հաստատեն եւ ոմանք ժխտեն. որպէս Հ. Եղուարդ Հիւրմիզեան եւ ոմանք՝ ի
 հաստատողացն եւ Հ. Արսէն Բագրատունի՛ն ընդ հետեւողս իւր՝ ի ժխտողացն համարի
 են: Յարդեաց եւս վիճեցան վասն այսր բանի երկու աշխարհաբառ ֆերրոյ՛ Կ.
 Պոլսեցի՛ն՝ նովի՛ն իսկ յանգաւոր չափաւ՝ Ա. Փանոսեան հաստատելովն եւ Ռ. Յ. Պեր-
 պերեան ժխտելովն հանապազորդեալք: Պուշոյն երեւի առ ի հաստատողացն կարգի,
 եւ բնութիւնն իսկ երբեք ուրեք բուրի սիրելի՛ յիւր սնման արդիւնն՝ զներդաշնակու-
 քիւն յանգից ընդ չափուցն:

Հապա՛ ըզբանն^[6] ընտրեա՛ երկոցըդ դու, օ՛ն,
Շընորհ գեղոյ, վայելչութիւն, յարգ ըմբոն:

Ի յանաղղակ աւիւն բազումք անձնատուր՝
Ի դուրս ոստչին յուղիղ բանէն, և այլուր
Հնարին խնդրել իմաստս ի տաղան անյարմար՝
Ըզգուշացեալ մի՛ զանձն առնել արհամարհ
Եթէ այլոց բերցեն խորհուրդ ինչ հանգոյն,
Ի բա՛ց ապա կացցուք զեղծմանցդ ի յայդգոյն.
Թո՛ղ պանծասցի Իտալիա խարուսիկ
Մնտտի տաղիցն ի փայլ մոլեալ ուռուցիկ.
Ամենայնի լիցի մեզ կէտ բանն ի ճահ,
Այլ դըժուարին իսկ է ուղին դիւրասահ.
Մի՛ միայն գոյ բանին ուղիղ ճանապարհ,
Դոյզն ի գըթել՝ անկցիս անդէն դուն ի վայր:

Է զի քերթող ոք յորդ ի նիւթն իւրական
Ոչ տայ տեղի մինչեւ ոչ նախ սպառեալ զայն.
Զի թէ զդարպաս դէսլ լիցի նմա անուանել^[7]
Նախ ըզճակատ նորին ապա ըզվերելս
Ըստորագրէ մանր՝ ածելով զիս ըզհետ
Յարկաց ի յարկս տաղտուկ տաղիցն համահետ.
«Բա՛ կածան աստ, պատըշգամբ ա՛նդ ամբառնայ՝
«Շուրջ ի խաղխամս պարունակեալ ի յոսկեայ.
«Սա դըրասա՛նգ. խոյակ նա բերձ ի կատար».
Զերանդս ըզգիծս ածէ զձեղուանն ի համար.
Էջըս քրսան ոստնում յառաջ զայրազին
Հաղիւ ի մուտըս պրծանիմ պարտիզին:
Ըզյորդութիւնդ ի քէն ի բա՛ց տար զանիր,
Եւ մի՛ յուսմէտ նըկարագիրս պարանիր.
Զանձիր բերեն երկարաձիգ բանք համայն,^[8]

[6] Բանն դասակից եւ արողակից է, ասէ Լապրիշեր, ճշմարտութեան. եւ է միա՛կ. եւ առ միակն՝ մարքի ժառանգել ի մի միայն շաւիղ, իսկ խոսորեղոցն յայնմանէ՝ շաւիղի հազարաւորք եւ բիւրաւորք:

[7] Միւսերի՛ յերոտդ գիրս իւրումն Ալաւիկայ՝ շաւիղ իբր երիս հարիւր տղս առ ի ստրագրել զանեկայն մասունս դարպասի՝ սկսեալ ի ճակատուցն եւ ի բարաւորացն մինչեւ ի պարեզն շուրջանակի: Ի յեկն ժառանգիս երեւեցան եւ ի մեզ բանաստեղծ եւ հոգեբան շայնքան գրիչ, որ զակասեցան յայդ յորդարքին տարապարս՝ ի նկարագիրս չոտեաց յարունսսմեւ նմանախօսութիւնս եւոքական հեղինակաց. ուղղո՛ց եւ ճշմարտաւորաց խիբաշի է այդ ոճ. զի ճշդաւորի սղութեա՛ն է ընծայել զճշմարտութիւն՝ եւ՛ սիրելի եւ՛ ըմբռնելի առնելով զայն:

[8] Այս տղ եւ յեսագայք՝ և՛ յարատւութիւնի՛ Որսեայն:

Եւ միտք յագեալ նոքօք՝ անդէն ի բաց կան .

Որ ոչ գիտէ ի սլառչաճին կալ չափու ,

Ձախսիսին ոչ գրադէտ կոչել է անգու :

Յաճախ՝ յանդէպս եթէ սարտնու ի յուռոյն

Բեզ առաւել հասցէ լինել յոռեգոյն .

Թ՛անզօր էր տաղդ , դու խըստագոյն առնես զայն՝

Խըրթին լինիմ՝ խորշեալ բանից ի յերկայն .

Անսեթեթ սա՝ այլ մուսայն մերկ յաւէտ ,

Նա սողալոյն ահիւ կորչի յամպս անհետ .

Թէ կամիցիս գոլ ամենից հաճելի

Պէսսիսացո՛ւ ըզչարագրածդ անդլակի ,

Անայլայլակ ոճոյ կարի՛ հոմաձեւ՝

Անտեւ է փայլ և քուն ածէ հուպ զինեւ ,

Եւ ձանձրարկու քերթողն հաղիւ ընթերցյի

Որ սնդմոսէ գոգ յեղանակ անյեղլի :

Նա երանի՛ որում տաղիցն իւր ի սլաց

Փափուկ անցմամբ մերթ վեհս ի ճա՛ն վերերգեաց՝

Է զի խառնեալ յախորժն ըզքաղցր կամ ըզլուրջ ,

ԸզՊարպենեալ^[9] առգնողք նորին խռնին շուրջ

Բերկրապատար երկոցն անձուկ տարփանօք :

Ձոր ինչ և դամ մի չարագրել սուցէ ոք

Մի՛ ձեւս գըձուձ բանից արկցէ ինք ի կիր՝

Յընտել իսկ ոճն յեռեալ ի ճա՛ն կերպս ընտիր .

Բանիցս երբեմն մորոս ծաղրերդն անպարկեշտ^[10]

Իշխեաց նորոգ փայլմամբ պատրել զաչս ի հեշտ ,

Երեւեցան տաղք ի շքոյ ընկեցիկ ,

Փողեաց Պարնաս իսկ ի բարբառ գըռեհիկ ,

Յանգերգելոյն ածխոյժ վաղեաց ըստ օրէն ,

Այլախօսիկն Ապողոն^[11] լեալ Թապարէն .^[12]

Ե. Դ. ՄՐՄԸՐԵԱՆ.

[9] Պարպեն՝ նշանաւոր գրականառ առուրցն:

[10] Այդ ոճ անպարկեշտ ծաղրերգութեան, ըստ Պուաշոյի, յուժի կայր յոյժ մինչեւ 1660, որպէս ցարդ առ մեզ երեւին տեւեմ համարման եւ ծաղրածու եւ խեղկատակ գրիչ յարման եւ յոսանաւոր, նշանի եւ պատճառք անկման ազնիւն փերութեանց եւ յարոյնից:

[11] Նշմարեւ զՎ. Իրգիլն այլախօսիկ Սփարոնի:

[12] Թապարէն՝ իտալիական խոշորարուեստ, սպասեակ շաղկապի ուրուսն Մոնետր անուանելոյ՝ ի սկիզբն 17րդ դարու:

Օգրավ Միւսլօ՝ Քրանսական արդի գրականութեան ամէնէն հուժկու միջ-
 ևերէն մէկը, այս միջոցիս մտնաւոր շահագրգռութեամբ մը միտենք իւր
 վրայ կեդրոնացուցած է, իր Le Foyer քառերգութեան Գօմէսի Ֆրան-
 սէզէն մեծութեան ետք՝ Անդուանի քառերգին մէջ բեմ համուելուն
 պատահաւով: Այդ այժմէութիւնը մեզի համար կը կրկնուի իր մէկ գործին՝
 Les Affaires sont les Affairesի նախորդ քառերգ Ռեա Տը Ֆէրօսի քառե-
 րախումբին կողմէ ներկայացուելովը: «Մասիս»ի ընթերցողներուն այս
 առիթով կը ծանօթացնենք Քրանսական նոր գրականութեան այդ հսկայ
 ներկայացուցիչը, մեր աշխատակից «Տօմինօ»ի հետեւեալ գեղեցիկ յօդ-
 ուածով, ուր կը պատկերանայ գործը եւ արուեստը ժամանակակից մտա-
 ւորականութեան հոյակապ դէմքի մը:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄՔԵՐ

ՕԳԹԱՎ ՄԻՌՊՕ

Ֆրանսայի արդի գրողներուն բազմերամ շրջանակին մէջ, է՛ն հետա-
 քըքրական, յանդուգն եւ միտքերը հրապուրող դէմքը կրնայ նշանուել
 ապահովաբար Օգլթավ Միւսլօն, թէ ֆիզիքապէս, թէ՛ մտաւորապէս:
 Մարմնեղ, լայն ու հուժկու ուսերով, մացառուտ կորածեւ յօնքերով՝
 որոնց մէջտեղը խորունկ սպիւ մը կը շուռի. աչքերը բաց կապոյտ,
 մտածկոտ ու գգուանոյշ, տեսակ մը դժգոհութիւն կը մտանեն, տգեղ
 իրականութեան դէմ մարտնչողի մտատանջութիւնը: Այն օրէն ի վեր
 որ, ամիսներ առաջ, Գօմէսի Ֆրանսէզի վարչատէր եւ հանրածանօթ
 ակադեմական գրող Ժիւլ Գլարթի մերժեց ներկայացումը Միւսլօի Le
 Foyer թատերագութեան, այն պատրուակով թէ խաղին մէջ յանդգնա-
 բար ձաղկուած էր Բառաստըն Անմահներէն մէկը, նոյն իսկ Ժիւլ Գլար-
 թին, լրագիրներու բարբառով եւ յերիւրանքով, այն օրէն կօնգուռեան
 կաճառին անդամը չէ դադրած հրապարակաւ գրելէ եւ բարեկամներու
 առջեւ ապացուցանելէ իր գրչին եւ լեզուին յատուկ բոլոր սրամտու-
 թեամբը թէ՛ բաղդատաբար իր Le Foyerին՝ ուրիշ շատ մը աննշան եւ
 անհրապոյր խաղեր կան թատրոնի տնօրէններէն ընդունուած եւ անգի-
 տակցօրէն ներկայացուած: Միւսլօ, իր այս նոր թատերագութիւնը
 լաւագոյն կը դաւանի Les Affaires sont les Affairesէն, որ այնքան յարգ
 եւ հռչակ գտաւ, ինչպէս այս վերջին խաղն ալ իր կարգին գերագոյն
 դաւանած էր աւելի հինէն գրած եւ բեմի վրայ հանած Les Mauvais Ber-
 gers թատերագութենէն:

«Թատրոնը, կը գրէ Միւսլօ, կեանքի պատկերներուն ճշմարիտ եւ
 հաւատարիմ ցուցումն է: Գիրքերուն մէջ ներկայացուած անձերը երե-
 ւակայելու համար, ընթերցողը ուժգին ջանքերու պէտք ունի, բայց
 բեմին վրայ անանկ չէ. նոյն անձերը կը տեսնէ, կը վայելէ իրենց
 իսկութեան մէջ, միս եւ ոսկորը վրանին: Գօռնէյլի, Ռասինի դասական

տիպարներուն վրայ աւելորդ կը գտնեմ խօսիլը. անոնք խաւաքարտէ մարդիկ էին, փոխանակ կամքի և բնազդումի կորովը ունեցող անձեր ըլլալու. հոգեբանութեան ու նկարագրի որ և է արտայայտութիւն չունէին իրենց մէջ. և սակայն, նոր թատերագիրներուն քով աւելի գէշ կը գտնեմ ես յղանալու արուեստը: Դասականներուն ստեղծած թիւերուն հանգիստաւորութիւնը չունենալէ զատ, աւելի կեղծ են նաև միւսներէն, նորերուն կողմէ մեզ հրամցուած դէմքերը: Նախ տաղտկալի միօրինակութիւն մը կայ. յաւիտենապէս անձնազոհ սիրունին է որ կը ներկայացնեն մեզ, կամ սիրատարփ գեղանի կինը, ցոփակեաց երիտասարդ կոմսը, կամ խորամանկ ու չարանախանձ պառաւ կոմսուհին, վերջապէս, կամ զուարճամոլ gagad, կամ խաբուող ամուսինը: Միշտ նոյն մարդիկն են անվերջանալիօրէն: Տիւմա Որդին ալ ունէր այս հիւանդութիւնը, նորերն ալ ունին: Յետոյ, այս անձերուն կատարած դերերն ալ միեւնոյնն են. թատերգութեանց մեծ մասը շնութեան, կնամոլութեան, անպարկեշտ խորամանկութեանց և շահախնդրութեանց շուրջը դարձող նիւթերու վրայ պատրաստուած են, իբր թէ կեանքը միայն ասոնցմով ներկայանար մեր աչքին: Մհ, եթէ ուզէք, պիտի ըսեմ ձեզ թէ բնմի վրայ հանելու է միայն այն թիւերը՝ որոնք կեանքի մէջ, փողոցը ձեռքովդ բռնուածի պէս ըլլան. ծիծաղելի, տարօրինակ, արգահատելի յաճախ, բայց շատ անգամ ալ բարձր, շահեկան և հրապուրիչ դէմքեր և ամէն բանէ առաջ, իրական, շուրջերնիս տեսնուած, դիտուած, ապրող թիւեր:

«Այս անձերը եթէ ներկայացնէ թատերագիրը իրենց իսկութեան մէջ, եթէ զնէ զանոնք այն չըմանակին մէջ ուր անցեալ ցաւերու, յոյսերու, մտահոգութեանց և երազանքի դժուարին զբաղման ենթարկուած կը տուայախն, եթէ վերջապէս հեղինակը զանոնք թարգմանէ կեանքի արդի ըմբռնումին և պահանջումներուն համեմատ, կարելի է ըսել այն ատեն առանց տարակոյսի թէ՛ լիովին յաջողուած կ'ըլլայ իր պաշտօնին մէջ և կ'արժանանայ ամէն քաջալերանքի և համարումի: Իրականութենէն դուրս բան չիկայ շահեկան և անոր մէջն է բուն արուեստը»:

Եւ Օգթալ Միուսո կատաղի իրապաշտ մըն է և ճշմարիտ արուեստագէտ մը: Կը սիրէ մանաւանդ Արուեստը ամէն պճինքէ, ամէն կեղծիքէ դուրս: Ընկերութեանց մէջ տիրող կեղծիքն ալ կ'ատէ և կ'արհամարհէ այն մարդիկը՝ որոնք կեանքը կը դառնացնեն իրենց արարքներով և ի վնաս ուրիշներուն: Իր ներքինը, հանգստաւէտութեան, բարօրութեան և պերճանքի բոյն մըն է և բոլոր անոնք որ կը սիրեն զինքը և կ'այցեկեն իրեն, ժամերով կը մնան հոն, չկրնալով բաժնուիլ այն հազուագիւտ ու թանկագին գեղօրներէն, նկարներէն զորս Միուսո հաւաքած է և անոնցմով այդ բոյնը muséum մը վերածած:

Տարօրինակ տրամադրութիւնով մը, իր տան մէջ տեղ չէ տուած բնաւ հին գործերու. հոն ամէն բան արդիական է, նոր է, տակաւին չծնած նորութեամբ մը՝ կարելի է ըսել: Մնաց որ, մեծագոյն մասը այդ նկարներուն, այդ արուեստի գործերուն՝ կը վերաբերին անանկ հեղինակներու՝ որոնց անունը գեռ չէ յիշուած ոչ մէկ տեղ. սակայն Միւսօ կը վստահացնէ այցելուն թէ՛ անոնք հետեւեալ օրն իսկ պիտի հոչակուին վարպետ և կը սկսի պատմել, բացատրել իր տպաւորութիւնները, իր համոզումները և վերջապէս իր կարծիքները, ըմբռնումները անոնց մասին, Արուեստի մասին: Միւսօ այնքան անկեղծ է և ուղղախօս որ յաճախ չվարանիր ամիս մը առաջ գոված հեղինակի մը վրայ, եթէ համոզուի որ սխալած է, հակառակ կարծիք մը յայտնել անվախօրէն և տեսակ մը վստահութեամբ և յանդգնութեամբ: — «Բիւվիս տը Շաւանը, օ՛հ, ժամանակին կը սքանչանայի իր վրայ. բայց չէ՛, հիմա անոր նկարչական կարողութիւնը անկենդան և անարուեստ կը թուի ինձի»:

Միշտ Արուեստն է, ճշմարիտ արուեստն է որ կը ղգաղեցնէ զինքը: Գիրքերէն աւելի, գրեթէ հաւասար սէրով թատրոնին, նկարներուն վրայ կը խօսի, մանաւանդ իր ունեցածներուն վրայ և կը բացատրէ մեծ խանդով ու եռանդով նկարչութեան անհամար նրբութիւնները, գաղաւթիքները, զանոնք իւրացնելու դժուարութիւնները: Նախապատուութիւններ ունի կարգ մը նորահաս նկարիչներու և գրողներու նկատմամբ և անոնց խմորին, խառնուածքին մէջ կը զգայ նշմարել արդի գրական մարդոց աճապարութիւններէն դուրս գեղեցիկ յատկութիւններու արտայայտութիւնը և գրողը:

Միւսօ, գեղեցկօրէն կազմուած և խնամքով պահուած հատընտիր գիրքերու մասին ալ արուեստագէտի արդար պաշտամունք մը ունի: Իր Jardin des Supplices հատորին համար Ռօտէնի գծել տուած է նրբերանգ նկարներ՝ որոնք կը բաղկանան մարմնաթոյլ և ջղագրգռուած վիճակի մէջ ի յայտ բերուած մերկ կիներէ, վրձինի հրաշալիքներ պարզապէս, այնքան բնականօրէն արտայայտուած, այնքան նրբութեամբ գծուած: Եւ այս կարգի ճարտար նկարներ պարունակող հատորները, բոլորն ալ գեղեցկօրէն չըջանակուած, կազմուած, ակնահաճոյ տեսարան մը, հիանալի ամբողջութիւն մը կը պարզեն իր մատենադարանին մէջ, ուր L'Abbé Julesի հեղինակը կ'առանձնանայ, իր հիւրերը ճամբելէ վերջ, մտքին և հոգիին մէջ թեւ առնող գաղափարները թողութիւն յանձնելու:

Արուեստէն դուրս, կեանքէն դուրս ուրիշ բանի վրայ համոզում չունի Միւսօ: Եւ արդէն չէ՞ մի որ կեանքը Արուեստն իսկ է և փոխադարձաբար: Վէպը, օրինակի համար, որ իրականութեան արդար պատկերացումը պէտք է ըլլայ, Միւսօի աչքին կը պարզէ խեղաթիւրուած և այլակերպուած դեր մը՝ որ չքմեղանքի կողմն ալ չունի. Համբաւա-

ւոր նկարիչ Հէննէրի ըսածին պէս, — «Չրաւեր երկարապատում նկարա-
գրութիւններով, միջադէպերով խճողել վէպի մը հիւսուածքը, այլ
պէտք է ճարտարօրէն ներկայացնել հոն Կեանքի մէջ տեւողած իրերը,
մինչեւ իսկ եթէ պէտք ըլլայ մերկ կիներ նկարագրել, նկարագրելու է
Նկարչութեան մէջ ալ ասանկ է»:

Անշուշտ Միուսօին պէս ուրիշ շարք մը հեղինակներ կան կեանքը իր
մերկութեան մէջ պարզող ու նկարագրող, իսկ Le Galvaire-ի հեղինակին
ըմբռնումով, մերկ կ'ընէ գծելու և նկարագրելու կերպին մէջ ալ վար-
պետութիւն կայ, արուեստ կայ: Մէկը, ըլլայ նկարիչ, ըլլայ վիպագիր,
կեանքը իր մերկութեան, իր իսկութեան մէջ պատկերացնելու պաշ-
տօնովը անգամ, պէտք չէ որ լուսանկարչական գործիքի մը պէս ըլլայ:
Իր հոգեկան խառնուածքովը, իր մտքի կարողութեամբը պարտական է
բնութեան տեսարանները, երանգները, ինչպէս մարդկութեան վիճակը
ու ցուցադրած երեւոյթները նկարել և արտայայտել այն իմաստով,
այն գեղեցկութիւնով՝ զոր անոնք կը պատկերեն: Եւ մասնաւանդ, զի,
մասնաւանդ իճեալ ըսուած բանը մէկդի ընելու է: Հեղինակ մը բնու-
թիւնը, կեանքը սրբագրելու յաւակնութիւնը չկրնար ունենալ:

Ինքը ստիպուած է անկեղծ ըլլալ, ճշմարիտ ըլլալ: Իտէալը հետա-
պնդենք ըսելով շատ սխալ շարժած են այն հեղինակները՝ որոնք բնու-
թիւնը խաթարելու, զայն քողարկելու, կարգ մը ճշմարտութիւններ
իբրեւ գծուածութիւններ ներկայացնելու կը նկրտին և մէջտեղ կը դնեն
խոհանոցի կանոնադրութեամբ մը, արուեստին վերաբերեալ կարգ մը
հրաշալիքները:

Միուսօի վէպերը, ստուգիւ, կառուցուած են այն տեսակ տիպարնե-
րով՝ որոնք դէպի ուղղամտութիւն, դէպի գեղեցկութիւն և երջանկու-
թիւն հասնելու համար իրենց ջանքերուն հակառակ, յաղթուած են
Կեանքի հզօր հոսանքէն և մասնաւորապէս ընկերութեանց աղտոտու-
թիւններէն:

Ասիկա դառն փիլիսոփայութիւնն է, իրական պատկերն է կեանքին,
զոր Jardin des Supplices-ի հեղինակը փորձած է պարզել իր ամէն գործե-
րուն մէջ: Զօլա և Ալֆօնս Տօտէ ասանկով անմահացան, առանց Ֆրանս-
սական Ակադեմիի թիկնաթոռներուն մէջ բաղմնելու:

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԵՐԱԶՍ

Փայրիպանքներդ չսփուտած են, համբույրներդ ալ համբուտած,
կը վախճաս որ շրտունքիդ նուրբ բաժակին սարսրումը,
Ամբոսիան կը սպառի, վայելքի այս պահերուն:
Դիչ մը խոլանք, բեկով, կը բաժնուիս, ա՛հ, յանկարծ:

Ունայնութեան դիւանին խորհուրդներէն կը ստսկամ.
Մի՛ ձգեր որ մեռնեմ՝ կեանքին վրայ այս անգութ.
Սիրեսիս վրայ սրբալի՛՜ հառազայրներն աչքերուդ.
Զե՞ որ խորհիլը մեռնիլ, հայհայտիլ է՝ զառ անգամ:

Անյազ, անվերջ կարօտի ցնորակո՞ծ ուսումով,
Երբ կը փորձեմ խոյանալ գիւղիդ մէջը խօլաբար,
Դուն կը սասես ու կ'ըսես. — «Երբե՛ք խելօք չես կենար»:

Երբեք խելօք չեմ կենար, որովհետեւ, ակնարով,
Անբաւէտ երկինքը հանգնալէս վերջը այսպէս.
Երկիս վրայ այս պարտալ, է՛հ, չեմ կրնար ապրիլ ես:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԻՐԻԿՈՒԱՆ ՄԷՋ ԽՈՐԻՆ...

Իրիկուան մէջ խորին,
Երբ օդայած կը բռչի,
Ծիրանեծաղիկ փետուր անուրջի՛
Հիւ հառազայրն առեւին՝
Հեծն է աղբիւրին մէջն ամէն ճիչի:

Իրիկուան մէջ խորին,
Երանգներ երբ ջուրին
Մէջը մարմնորին,
Ու բանձրամած ժրխորին
Իյնան՝ քեւերը մէկէն.

Իրիկուան մէջ խորին՝
Կարկաշն աղբիւրին կը կանչէ յսակ,
Հովիկ նաժիտն՝ իր ջուրին
Խած հանդերձը փոքելու:
Սւ իրիկուան մէջ խորին,

Ծանր ինչպէս ալելու,
Կարկաշն աղբիւրին կը կանչէ յսակ,
Դեռ յամեցող խօսն ըսպիտակ
Պառնուկներուն՝
Որոնք հեռուն

Մըրցաղին մէջ կ'իյնան՝
Բաղիկներուն պէս ձիւնին:
Սւ իրիկուան մէջ խորին,
Իրիկուան մէջ ծաւալական ու բուրեան,
Կարկաշն աղբիւրին

Իր օջախայի
Հովանոցներուն մէջ՝ կը պրտուսի,
Հոն ծաղիկներուն ու տերեւին հետ
Ըսպատելու որ ծագի
Կոյսն առաջին լուսաւորին:

ՄԵՍԱԲ ՄԵՍԱՐԵՆՑ

“ՄԱՍԻՍ”Ի ՀԱՐՑՈՒՄԸ

«Մասիս»ի Գրական Մրցումներէն ետք, որոնք գրաւէր հասարակութեան մէջ արթնցուցին համակիր ոգեւորութիւն մը, կը հաստատենք. նոյնչափ շահեկան ու գրաւիչ գրական ժամանց մը, որ միանգամայն կը բռնափէ ընկերային լուրջ հարց մը, եւ որուն ամէն դասակարգի ընթերցողներու առթելիք հետաքրքրութեանը վստահ ենք: Այդ նիւթն է հետեւեալը.---

Մեծահարուստ, գեղանի, երիտասարդ պարուն մը՝ սիրահարուած է աղջկան մը. տղուն հայրը կ'արգիլէ իրենց ամուսնութիւնը. երիտասարդը այդ արգելքին դէմ՝ անձնապաշտութեան մէջ կը գտնէ իր հաճոյքը: Արդ.

Ա.— Ճիշդ է այդ արարքը. կ'արժէ՞ եւ կ'արդարաւնայ ինք՝ կրօնքին ու ընկերային նկատմաներուն առջեւ:

Բ.— Ի՞նչ է հորը իրաւասութեան սահմանը՝ տղուն կամքին վրայ:

Գ.— Սիրահարութեան մը, աղջկան մը համար՝ ներելի՞ է կեանքէ հրաժարում, երիտասարդի մը՝ որ ընկերային, ժողովական ու քառոյական մեծ ձիրքերով օժտուած է:

Այս հարցին շուրջը ամփոփ ու յաջող պատասխաններ՝ նիւթը լրջօրէն ուսումնասիրող ու վերլուծող՝ պիտի հրատարակուին Մասիսի մէջ: Ամէնէն վերջը, մեր աշխատակիցներէն ծանօթ գրող մը՝ պիտի ներկայացնէ եզրակացութիւն մը՝ հանուած իր համոզումներէն ու դաւանանքներէն եւ հրատարակուած պատասխաններէն: [1]

[1] Մօտաւոր թիւով մը՝ պիտի հրատարակենք պարզեաւոր ուրիշ Գրական Մրցում մը, գերազանցապէս հրապուրիչ իր նիւթով ու գրական ընդհանուր հանգամանքով:

տեղի տալ : Եւրոպայի մէջ, կառավարական և անհատական պաշտօնատուները այսպէսով լեցուն են *rate* փաստաբաններով, երկրաչափներով, նոյն իսկ բժիշկներով և Սօրպոնի ուսանողներով : Ասոնցմէ մէկ մասն ալ կ'ապաստանի դաղթականութիւններու մէջ, մոռացութեան մատնուած և նոյն իսկ այլասերած՝ դաղթականութեանց յատուկ խառնակ և անհարազատ բարքերու մէջ :

Ամէնէն փառասէրները և ամէնէն ուժեղներն ալ տեղի չեն տար երբեմն. կը դիմադրեն, կը պայքարին. Բարիզի տուներուն վեցերորդները լեցուն են ասոնցմով. իրենց ուսանողութեան չըջանը ընելէ ետքը, ապաւինած որ և է մասնագիտութեան մը անվերջանալի ուսումնասիրութեան որ գոնէ իրենց չքաւորութիւնը կը սքոզէ ուսանողի տիրուրին տակ, կը տընին, կ'աշխատին անխոնջ ու կը տարուին վերջապէս իրենց կացութեան յատուկ դաւն և արհամարհոտ հպարտութեան մը. բոլոր այն դժուար կացութիւնները որոնց մարդ ինքզինքը արժանի չըգար առաջ կը բերեն յայտնի կերպով այդ դիւրադգած հպարտութիւնը. կանխապէս մահեր, ջլանկարութիւն և երբեմն նոյն իսկ յիւսրութիւն միակ վարձատրութիւնները կ'ըլլան յաճախ իրենց մարտիրոսացած կեանքին. մէկ քանի յապաղած յաղթականներու փոխարէն ինչքան կորսուածներ, յաղթուածներ. հասարակութիւնը միայն յաջողածները կը տեսնէ, դանոնք կը ծախահարէ, և չխորհիր ինկածներուն վրայ :

Աղքատ մտաւորականներու մէջ, ամէնէն շահեկանները և մեզի ալ այնքան սրտի մօտիկ, անտարադիս դրագէտները և արուեստագէտներն են : Մեր մէջ դեռ գրեթէ չէ պատահած որ բժիշկ մը առանց յաճախորդի մնայ. միւս կողմէ մեր դերասաններուն, արուեստագէտներուն և գրագէտներուն խեղճութիւնը, երբ իրենց կեանքը կախում ունի այս արուեստներէն, յայտնի բան է. պիտի տեսնենք որ արուեստներու և դիտութեանց կեդրոն համարուած քաղաքներու մէջ ալ իրենց կեանքի պայմանները շատ տաժանելի են :

Մէկ քանի նուիրագործուած գերասանուհիներու և գերասաններու փոխարէն ամբողջ դասակարգ մը կայ անօթի մնացած արուեստագէտներու. սքանչելի ձայներով օժտուած և երկար տարիներ *étude* ըրած արուեստագէտներ երբեմն կը ստիպուին իրենց օրապահիլը ձարելու համար բակերու մէջ երգել, շատեր կը թողուն հայրենի երկիրը և կ'երթան իրենց յուսարեկ կեանքը վերջացնելու օտար երկիրքի տակ : Հապա անոնք որ երգի կամ դաշնակի դաս կուտան և օրը ութը տասը անգամ ձախաւեր մատներու տակ կը լսեն անհանդուրժելի կալն երը կոմ տհաս և աններդաշնակ ձայներով կրկնուած սօլֆեժները. կ'երեւակայէ՞ք վրձակը խեղճ արուեստագէտին՝ որ իրիկունը կը հասնի տուն՝ ջղագրգիւռ, խլացած, կասաղութեան մէջ և դեռ պէտք է որ անվերջանալի և ստորնացուցիչ խոնարհութիւններ ընէ՝ անմիտ, պարծենկոտ և քմահաճ ծնողներու առջև, որպէս զի չկորոնցնէ զիրենք :

Կիրներու դիրքը մասնաւորապէս փափուկ է. իրենց ստացած ամսականը — եթէ երբեք բազմը ունեցած են տեղ մը ընդունուելու — մէկ քառորդը իսկ չլեցներ այն ծախքերուն՝ զոր հարկադրուած են ընել իրենց արդուզարդին համար. ասկէ զատ պէտք է պատշաճօրէն կահաւորուած ըլլան, պէտք է լաւ ուտին՝ զիմադրելու համար իրենց սպասիչ կեանքին, պէտք է իրենց անձը խնամեն, գեղեցկացնեն։ Ի՞նչ ընել, երբ արդէն բուսականաչափ եկամուտ մը չունին անկախօրէն իրենց արուեստէն. իրենց ներելի չէ նոյն իսկ պարկեշտ ըլլալ այս պայմաններուն մէջ. համեստ ամուսնութիւն մը ընել, զաւակներ ունենալ... պէտք չէ երազել. աւելի լաւ է անմիջապէս քաշուիլ ասպարէզէն։ Կը հասնի անխուսափելի թաւեկամը. անոր կը յաջորդէ ուրիշ մը, ուրիշներ... և այսպէս շարունակաբար։ Եթէ իր ունեցած տաղանդը արտաքոյ կարգի փայլ մը չունի, եթէ իր անձնական շնորհներուն չմիացներ արուեստի խորունկ հասկացողութիւն և եթէ օժտուած չէ մեծ և թափանցող իմացականութեամբ մը՝ որոնք զինքը կրնան աղատել վերջապէս, իր երկասարդութեան քանի մը տարիներէն ետքը իրեն կը սպասեն բացարձակ մոռացութիւնը և անկումը։ Եւ դեռ ասոնք համեմատաբար բազմաթիւներն են. որովհետեւ ասոնց մէջ վերջապէս ամէնէն զօրաւորները կրնան յաջողիլ և մնալ. բայց ամբողջ խումբ մը կայ, ամէն օր թատրոնի անօրէններու նախասենեակին մէջ դեգերող, որոնք նոյն իսկ չեն յաջողիր ուղղակի պայքարի մտնալ, հասարակութեան երեւալ և իրենց արժանիքները ի տես բերել. անանուն և մթին մարդկային ալիք մըն է աղ, յոյսերով, երազներով ուռած, որ անխուսափելիօրէն և շարունակ գոց դուռներու կը բաղխի... Գործաւորին աշխատութիւնը չբազմապատելի այս խեղճերուն կրած զրկանքներուն. ասոնք գինեատուն չունին ուր երկու գաւաթ ապսէնդի մէջ՝ լեզուին ծանրացած զինովութենէ, սրունքնին և ձեռքերնին դողդոջուն՝ իրենց ցաւը տրանջան, իրենց զրկանքները պօռան, իրենց շահին անբաւականութեան դէմ դանդատին քս իրենց տէրերուն դէմ հայհոյին. ասոնք տէր ալ չունին, շահագործող իսկ չունին։ Բանիններ ճանչցած եմ որ պիտի ուղէին սիրով շահագործուիլ, բայց բան մը ընել վերջապէս. — իրենց թշնամին անանուն և անտարբեր հասարակութիւնն է. ատելու միտքաւորութիւնը իսկ չունին՝ երբ յուսաբել և ախուր՝ կը դառնան ամէն իրիկուն իրենց վեցերորդը, յաճախ առանձին ու լքուած և ո՞վ գիտէ եթէ իրենց այն իրիկունն ընթրիքին համար, վերացական մարդիկներու միամտութեամբ, իրենց յոյսը դրած չէին այն օրուան ընելիք՝ զիմուսներուն վրայ...

Գրագէտներու և նկարիչներու վիճակը գաղտնիք մը չէ բնաւ։ Միլէ մը կը մտնէ զրկուած ամէն բանէ. և դեռ աս ալ բազմաւոր մըն էր. իր գործը սահմանուած էր ապրելու. քանիննք պիտի ուղէին գոնէ այդ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ԴԷՊԻ ԲԵԽԵՌ. — ՆԱՆՍԷՆ
Թարգմ. Մ. Նուպարեանի

Քիչ անգամ թարգմանիչ մը կրնայ այնչափ յաջող ընտրութիւն մը ընել, հայացնելու համար գիրք մը՝ որ ամէն դասակարգի ընթերցողի ճաշակին յարմարելու առաւելութիւնները մարմնացնէ, որչափ Մեսրոպ Նուպարեան իր «Դէպի Բեւեռ»-ով, Գիրք մըն է ան՝ զոր հաւասար հաճոյքով կրնան կարդալ ամէնէն դժուարահաս զրագէտէն մինչև ամէնէն ռամիկ ճաշակի տէր ընթերցողը, այնչափ հրահանգիչ, այնչափ շահեկան ու այնչափ զբօսեցուցիչ նիւթ մը կը խտացնէ ան, — աշխարհահռչակ երկրախոյզին՝ Նանսէնի դէպի բեւեռ ճամբորդութեան իրական նկարագրութիւնը, վրձնուած կենդանի դրուագներով ու սարսուղագրեցիկ պատկերներով։ Անո՞վ նաեւ կը կրկնուի կարեւորութիւնը այս հաստորին որ՝ ան ինքնին գեղեցիկ նմուշ մըն է օգտապաշտ զրականութեան, զարտադրութիւն մը վիպական այն սեռերէն՝ որոնցմով է որ անած է աւելի մեր զրակաւորութիւնը, «Դէպի Բեւեռ»-ին ընթերցումը՝ կ'ուսուցանէ, կը զարգացնէ, կը զատիարակէ, կը սրէ միտքը ու երեւակայութիւնը, կեանքի նոր հորիզոններու և տեսաբանութեան մէջ կը մտցնէ տեսողութիւնը ընթերցողին։ Կարելի չէ նոյնիսկ հակիրճ տողերու մէջ՝ ամփոփել ամբողջ նիւթը հաստորին, գաղափար մը տալու համար անոր վրայ։ Այդ նիւթը նկարագրութիւնն իսկ է այն դժուարութիւններուն, արհեստիքներուն, որոնց դիմագրաւած է Նանսէն՝ նկրտելով հասնիլ իր գաղափարականին, Բեւեռը գտնելու մէջ է՝ ամբողջովին յաջողած, մօտեցած է սակայն անոր, Բեւեռի մինչև չկոխտուած հեռաւորութիւններու մէջ արշաւելով, և այդչափ, — իսկական Բեւեռի մը գիւտին յաջողութիւնը մարդկային հետաքրքրութեան համար սիրուն գառանցանք մը մնալ սահմանուած ըլլալով թերեւս։ Այդչափն ալ բան մըն է, յաղթանակովը անվտանգ ու անկորուստ դարձի մը, որ պզտիկ բախտ մը չէ, առջի օրէն կեանքը զոհելու յանձնառու արկածախնդիր երկրախոյզի մը համար։ Բառաբանագիր Նուպարեանի ֆրանսագիտութիւնը՝

կակածելու պէտք չէ՞զեր արձակ գործի մը թարգմանութեան հարազատութեան և հաւատարմութեանը մասին։ Ինչ որ միայն այդ թարգմանութեան մէջ նկատելի կը մնայ, անոր գեղեցկագիտական մասն է, այդ հայացումին լեզուական տեսակէտը։ Եւ պէտք է ըսել թէ՝ թարգմանութեան զուտ հարազատութեան խնդիրէն դուրս՝ Նուպարեանի ոճը չուի ազդոր գրիչի մը զրոշմը, իր աշխարհաբարը զուրկ ըլլալով այն գեղեցկագիտութենէն ու լեզուական ճաշակէն՝ որոնցմով է որ կ'ամբողջանայ հրապոյրը և վայելչութիւնը ընթացիկ աշխարհաբարին։

Պէտք կ'այ մանրամասնելու հաստատաբանութիւնները այս նկատողութեան՝ զրախօսականի մը մէջ՝ որ լեզուաբանական յօդուած մը չէ՝ վերջապէս։ Նուպարեանի թարգմանութեան մէջ այդ տեսակէտն ալ նկատի առնուած է։ Խնամուած ըլլալով՝ գործը կրկնապէս պիտի շահէր։ Բայց չէ՞ որ զուր պնդում մը և պահանջում մըն է աս, քանի որ լեզուի թերինքը անձնատուր ու անվորմ գրիչ մը՝ չզգար արդէն այն սխալը՝ զոր կը գործէ, և այն նրբութիւնը՝ որով կրնայ գեղեցկանալ գործի մը լեզուն և փրկուիլ զայն խաթարող խորթութիւններէն։

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՆԱԽՆԻ ԵՌՏԵՐՈՒ

ԲԱՆԱՍՏԵՆԴՈՒԹԻՒՆԸ

Կրօնքը՝ ինչպէս մարդկային քաղաքակրթութեան հզօրացոյն ազդակներէն մէկը եղած է, նոյնպէս եղած է սկզբնապատճառը բանաստեղծութեան, զանազան ազգերու մէջ։ Նախնական դարերու մէջ կրօնքը եղած է սէր արժարժողը դէպի չաստուածները։ Այդ սէրը պէտք էր արտայայտուէր շատ բարձր և շատ խորհրդաւոր միջոցներով, անլսելի մրմունջները չէին բաւեր երբեք դիցուհիներէ և դիքերէ պատգամներ խնդրելու։ Եւ լուր մրմունջը անկարող էր բազմաթիւ չաստուածներ յարաբերութեան մէջ դնելու մարդոց հետ։ միջոց մը պէտք էր սէրը արտայայտող, և առ ալ բանաստեղծական երգերու ստեղծումը եղաւ։ Սկզբնական բանաստեղծութիւնները կրօնական և դաշտային երգերը եղան, նուերուած Ապողոնի և Մուսաներուն։ Կա.

կայն այդ հոգեւոր շարականները աւելի ներ-
դաշնակաւորելու համար՝ յօրինուեցան նուա-
զարաններ և ձայնական գործիներ, որոնցմով
չաստուածներու պաշտամունքին նուիրուած,
հանդէսները աւելի խորհրդապաշտ ձև մը
կ'առնէին և հանդիսատեսներու սիրտին մէջ
աւելի վառվռուն զգացումներ կ'արթնցնէին:
ԿիՍառը և քնարը եղան նախնի հեծանոս
Յոյներու գլխաւոր նուագարանները, շարտար
նուագածուններ՝ կիՍառի յարերուն վրայ մեծ
յաջողութեամբ երաժշտական զեղեցիկ երգեր
կը յօրինէին, յարգանք և սէր արտայայտելով
չաստուածներուն: Երիտասարդուհիներու
կազմած պարերուն մէջ շրժուէրներէ դիւրիչ
երգեր կը ծորէին, նուիրուած Վէնիսի
անունին: Նաւաստին Պօսիդոնի կ'ուղղէր իր
յօրինած կամ ուսած բանաստեղծութիւննե-
րուն ամէնէն ներդաշնակը: Երկրագործը
դաշտային հանդէսներ կը սարքէր ի պատիւ
Դեմետրէի դիցունհին, աղետական բանաս-
տեղծութիւններով առատ հունձք ակնկալելու
մտադրութեամբ: Դիւցազներգական բանաս-
տեղծութիւնը լրուեցաւ պահ մը իր չաստ-
ուածներու փառաբանութիւններով, և ժողո-
վուրդը սկսաւ ներփոխել հիւսեղ նախնի
պատերազմիկներու շուրջը: Հոմերոս երգեց
դիւցազներգութիւններուն ամէնէն հոգեցունե-
ցը, որուն ամբողջութիւնը ժողովուրդին բեր-
նին մէջ կրկնուելով՝ ծնունդ տուաւ երկու
չքնաղ բանաստեղծական երկերու, Եփու.
կաՄին և Ուլիսսականին: Անոնց՝ հա-
կայ հեղինակ անուանի երգիչը՝ Հոմերոս
Քիոս կղզիին մէջ երգած է իր բա-
նաստեղծութիւնները: Ո՛չ նուազ հետաքր-
քրական է նաև նախնի քնարերգական բա-
նաստեղծութիւնը, որ ժողովրդային երգերու
անունին տակ՝ իր մէջ պահած է սէրերու
ամէնէն խնկելին և խորհրդապաշտը, և նկա-
րագրութիւններու ամէնէն ցայտունը: Դաշ-
տային այդ երգերուն մէջ քնարը ունեցած է
խիստ կարեւոր բաժին մը, ընկերանալով
սիրային երգերու: Բանաստեղծութեան այս
ծիւղը հեծանոս Յոյներու մէջ խիստ յաջող
կերպով մշակուած է: Պինդարոս, որ ապրած
է Քրիստոսէ 5 դար առաջ, մեծ հռչակ հա-
նած է բանաստեղծութեան այս ծիւղին մէջ:
Մանստրապէս ողիմպիական խաղերուն մէջ
հռչակաւոր հանդիսացողները փառաւոր մուտք

մը կ'ունենային դէպի իրենց ծննդավայրը և
բերկրալից ցոյցերու մէջ կ'ողջունուէին հան-
րութեան կողմէ: Ինչպէս տեսնուեցաւ, նախնի
հեծանոս Յոյներուն մէջ ամէնէն աւելի խնա-
մով մշակուած են բանաստեղծութեան երկու
ծիւղեր, դիւցազներգական և քնարերգական,
որոնց բեկորները կը մնան մինչև այսօր,
զրականութեան հսկայ պատմութեան մէջ:

S. U.

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷ

1886ին, երիտասարդ բանաստեղծներու
խումբ մը կը հաւաքուէր, ամէն շաբաթ,
Լըզոնդ տը Լիլի բնակարանին մէջ: Դրա-
գէտներու այդ ակումբին մէջ անխուսափելի
կերպով ներկայ գտնուողներն էին Գաթիլ
Մէնտէս՝ որուն համբաւը արդէն սկսած էր
ծիլ տալ, Սիւլլի Բրիւտոս և Ֆրանսուա
Քօլիէ, որոնք այդ ատենները հրատարակած
էին առանց մեծ աղմուկ յառաջ բերելու,
Երկու զիրբեր, առաջինը՝ Les Epreuves,
իսկ միւսը՝ Le Reliquaire, Անտրէ Թէօրիէ,
Վիլիէ՝ տը Լիլ Ատան, Ժօրժ Լաֆէնէսմըրը,
Էմմանուէլ տէ Գ'էսսար, Բօլ Վէրլէն, Լէոն
Վալատ, Ալպէր Մէրա, Լէոն Տիէրգս, Անս-
ժօլ Ֆրանս, Արման Սիլվեսմըր՝ հեծանոս
Փեճարպան, Ժօզէ Մարիա տը Լէրէտիա՝
Սոնէի Չէլինին: Բոլոր այս երիտասարդները
խանդոտ սէր մը ունէին բանաստեղծութեան
նկատմամբ, զեղեցկագիտութեան հաւատք մը,
նրբակրկիտ արուեստագիտութիւն մը, արհա-
մարհանք մը՝ դիրքութիւնով ձեռք բերուելիք
զրական յաջողութիւններու և տխուր ծանձ-
րամտութիւններու հանդէպ: Հասարակ տեղիք
մը իրենց աններելի մեղք կը թուէր, և տա-
րակուսելի յանդի մը խղճահարութիւնը իրենց
քունին հանգիստը կը վրդովէր: Ինչ սխալի
և յանկուցիչ հրապոյր մը ունէին այդ զրա-
գէտներու հաւաքումները. հոն յաճախողները
անշուշտ չեն մոռցած: Փիլիսոփայութեան,
զեղեցկագիտութեան և զլլատարաբար զրա-
կանութեան վրայ կը խօսակցէին, երիտասար-
դի բոլոր համարձակութեամբ, բոլոր անկեղ-
ծութեամբ և բոլոր խանդավառութեամբ:
Յաճախ անցնալի և ներկայի զրական զոր-
ծերը իրարու կը բաղդատէին, երբեմն հիա-
ցումէ կուրցած և երբեմն ալ ոգևոր՝ այն

տեսակ բնագաւառութեամբ մը՝ որ մինչեւ անիրաւութեան կ'առաջնորդէր զիրենք: Քօլէժ տը Ֆրանսի հմտայից վիճարանութիւնները, բարձրագոյն theorieները և դասաւանդութիւնները յաճախ կ'ընդհատուէին արտադոց առաջարկութիւններով կամ նորակերպ գրական կարծիքներու հոյով մը: Եւ այս տեսակ նիւթերը բարձր-սձայն և տեւական խնդուքներով կը լեցնէին սենեակին գրական մշտնորտը: Երբեմն, Լըգոնդ տը Լիլի հիւրերէն մէկը սօցէ մը, կամ կարճ ոտանաւոր մը, կամ Թէ հոգեկան կամ Թատերական հատուած մը կը կարդար: Ընթերցումը աւարտելէն վերջը կը սկսէին գործին վրայ խօսիլ, առանց իրենց խորհուրդներուն և խժժանքներուն վրայ իշխելու: որովհետեւ գրական այդ ակումբին առաջին նշանաբանն էր, բոլորովին անկասի ըլլալ գրական զաղախարհներու մէջ: Յետոյ կը վերականգնէին իրենց ընդհատած խօսակցութիւնները, Սոփոկլէսի Յոյներուն և Բոնապարտի Հռոմայեցիներուն և բազդատական կրօնքներուն վրայ ծառելով: Ժամերը ասանկ կը սահէին, կարճ բայց արդիւնաւոր, և կէս գիշերը զարկած կ'ըլլար արդէն, երբ միտքերին կ'իյնար մեկնիլ: Այն ատեն Պալլադի տէ գ'էնվալտի լուծութիւնը կը խանգարուէր վարկեան մը, ոգեւորուած վիճարանութիւններէն, բարձրաձայն խնդուքներէն: Թարգմ. Ն. Ե.

ՄԵՐ ՆՈՐ ՆՈՒԷՐԸ

Պզտիկ լուսարանութեան մը համար՝ որուն մասին անտոյգ կը մնան շատեր՝ ըսենք Թէ՝ Մասիսի նոր նուէրը ձեռքէ չսխալուած ծախուի: Կը հարցնեն նաև Թէ՝ մեր նուէրին ամբողջ հաւաքածոն է՝ որ սխալի ստանան Մասիսի բաժանորդներ, Թէ անկէ միայն հատ մը: Կը պատասխանենք Թէ այո՛, ամբողջ 30 հոգինոց ալլաժը, և ահա՛ Թէ ինչո՞ւ կ'ըսենք որ ան մեծապէս հրապուրիչ զարդ մըն է, և զեղարուեստական զեղեցիկ գործ մը: Անոնք որ ստացած ըլլալով Մասիսի նախորդ նուէրը, կը փափաքին նաև ունենալ նոր նուէրը, կրնան ալ իրաւունքին տիրանալ, նոր բաժանորդագրութեամբ մը՝ որ և է հասցէի մը:

ԱՐՁԱՂԱՆԳ

2. — Կարգա՛նք ոտանաւորնիդ. —

«Սիրային Տաղեր», («Նայումաժդ», «Տիկին Ա.ին»)»

Սէւց ի հարկին
Նայումաժ մը Տիկին,
Պերճախօս քարգման
Մ'է՛ւրճի՛ յուզման
... Ուր իմ եւ քէ ձեր
Անբարբա՛ւ լեզուին
Կապանքներն իզուրին:
Նայումաժդ արդէն
Ինձ յուզման կ'առքեն
... Որով կը ցնծայ
«Սիրս տը խաբուսիկ»
Ինձ այնպէս ըսիք...:
... Ուրպէս զի ամուր
Ընէ՛ք մի շնորհ
Ակնարկ մը ձգէ՛ք
Այս քոչնէկին հէ՛գ.
Խօսէ՛ք քոչնէկին
Գգուէ՛ք զայն կրկին:

Կը բաւէ, հասկցուցաւ որ՝ դուք ալ **սէրս** մը ունիք այդ Տիկին Ա.ին հետ: Բայց ինչո՞ւ ասոր համար ինքզինքնիդ տանջելու էք ելեր, եր'ինելով տողեր, զորս անտոյգ ճակատագրի մը կը յանձնէք: Հապա ե՞թէ չհրատարակուի՞ն «Սիրային Տաղեր»ը, Կարելի չէ՞ր այդ տողեք մէկու մը հետ զրկել ուղղակի հասցէին: Ատով՝ անյապաղ պիտի շահէիք Տիկինին... սիրտը, միանգամայն զերծ ըլլալով... ահա սինին վախէն: Որչա՛փ ալ անփափկանկատ էք՝ ձեր սիրային յայտարարութիւնը հրապարակով ընելու չափ: Մնաց որ՝ ի՛նչ միամտութիւն, ատաղճերով խողերով հասկցնել ձեր սէրը, զիշերներ անքուն մնալ անոր հրատարակումի սպասումին մէջ, — տակաւին չհրատարակուիլն ալ կայ և պարսպ տեղը ժամանակ կորսնցնելնիդ, — յանգերով ոտքերով նկարագրել զգացում մը, որ մէկ բառով ալ կը բացատրուի: Գործնական ժամանակի մը մէջ կ'ապրինք, բարեկամ, ատեն մի կորսնցնէք՝ ոտանաւորնուդ հրատարակութեանը սպասելով. կառք մը և... շիտակ հասցէին... Սիրային գործերու մէջ յաճախ ակնարկ մը, քարձակ տող մը շա՛տ աւելի

կ'արժեն՝ քան Լամարձինի «տոնաւոր» հաս-
տորներ: Դուք իսկ չէ՞ք հաստատեր. —

Սեւայ ի հարկին
Նայումս մը Տիկին
Պերճախօս քաղման
Ս'է սրէի յուզման:

«ՓՈՒՆՁ»Ի ԱՐՏՈՆԱՏԵՐ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ 2. ԱԼԱՃԱՃԵԱՆԻ ՄԱՂԸ

Վերջին պահուն ցաւով կը լսենք Հայ
լրագրական գործիչներու ամէնէն հին ան-
գամներէն մէկուն՝ Համբարձում էֆ. Ալանա-
սեանի մահը: Հանգուցեալը 40 տարիէ ի վեր
կը հրատարակէր **Փուլցըր**՝ որ, Մասիսէն
ետքը, Հայ հնագոյն Թերթն էր: Ալանասեան
իբր լրագրական դէմք՝ կը յատկանշուի նշա-
նակելի զարտուղութիւններով ու մասնաւոր
խառնուածքով մարդու իր ինքնութիւնով:
Դրական համոզումներու և եկեղեցական ու
լրագրական հարցերու մէջ ան եղած է ան-
դրդուելի դաւանանքի տէր այն միտքը՝ որ
չճկիր ամէնէն յայտնադիման ճշմարտութիւն-
ներուն իսկ, իր այդ տրամադրութիւնը՝ զինքը
կապած է իր զրական ու լեզուական վաղն-
ջական այն դաւանանքներուն՝ որոնցմէ չէ
շեղած, զրելով ու հրապարակախօսելով ա'յն-
պէս՝ ինչպէս քառասուն տարի առաջ և իր
Թերթը վարելով համաձայն ուղղութեան մը՝
որ այսօրուանը չէ՝ երբեք: Առանկով իր
լրագրական գործունէութիւնը անշուք փառք
մը միայն կրցած է իրականացնել, զերծ լայն
օգտակարութեան մը արժանիքէն: Իրմով սա-
կայն կ'անհետանայ լրագրական աշխարհէն՝
իբր մարդ յարգելի դէմք մը: Մեր ցաւակ-
ցութիւնները կը յայտնենք այս անակնկալ
մահուան տոբով՝ Ալանասեան ընտանիքին:

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Մեր յարգող պաշտօնակից Յովհաննէս
էֆ. Թաթեան, Տէր և Տնօրէն **ՄԷճՈՒԼԱՅԻ**
Ա-խպար Թերթի, դժբախտութիւնը ունեցաւ
կորսնցնելու իր մայրը, Տիկին Տիրուհի Թ-
յայեան: Մեր ցաւակցութիւնները Թաթեան
ընտանիքին:

★ Հաճոյքով կ'ողջունենք վերերեւոյժ
Բիւզաճըլիուհի, որ ամիսէ մը ի վեր զաղ-
րած ըլլալով, հինգշաբթի օրուրէն սկսաւ
հրատարակել, Տպագրական Տեսչութեան
հրամանով:

★ Մեզի զրկուած նամակէ մը կը տեղե-
կանանք Թէ՝ համալսարանական Պրն. Սէր-
ժան զնահատական տողեր նուիրած է Իզ-
միրցի քերթող Տիար Խ. Պաղտասարեանի՝
Լա Ռեֆօնմի մէջ հրատարակած ֆրան-
սերէն բանաստեղծութիւններուն:

★ Յ. Գ. Մըմըրեանի նոր հրատարակու-
թիւնը, «Պուէտ Խաչատուր Միսաբեան»,
բանասիրական շահեկան գործ մը, ժամանա-
կակից իմացականին վրայ տեսութիւններով,
կը ծախուի բոլոր զրգաւճաւորներուն ըով,
մեծաքանակ և կանխավճարով գնողներու
25% զեղչով: Դին 7 1/2 դրուշ: Դրել հեղի-
նակին անունին, Զարգարեան Դրատուն,
Զարմարճըրար, Պոլիս:

★ Մասիսի նախորդ Թեւում Արշակ Ալ-
պօյանեանի յօդուածին մէջ յիշուած Պետրոս
Աղամեան անունը պէտք է ըլլայ Տիգրան
Աղամեան, ինչպէս ետքէն անդրադարձանք
Թէ շփոթած է մեր աշխատակիցը, մոռնա-
լով նաև **ՃԵՐԻՏԷԻ** խմբագիրներուն մէջ
յիշել Տիար Ասատուր Տէր-Մատթէոսեանը,
որ երկարատեւ ու կարեւոր մասնակցութիւն
մը ունեցած է հոն:

★ Արտաշէս Յարութիւնեանի նախորդ
Թի. Ռեմի տը Կուռման յօդուածին մէջ
սպրդած են հետեւեալ վրէպները

Էջ	Տող	Կարգալ
306	5	պահանջում գոհացում
"	28	գեղեցկութեան գեղեցկագիտու- թեան
306	38	զրականութիւն չէր զրականութիւն չէր
307	38	ժողովողին ժողովողին
308	28	ձիրքերուն կիրքերուն
"	29	այգանութիւն այգանութիւն
309	24	հասարակ ու հասարակ,—

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ
ԱՐԱՄ ԱՆՏՈՒՆԵԱՆ
ԱՐՏԱՆԵՆՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՏՈՒԲԵՆՍ
ՄԵՐՈՒԹԱՆ ՊԱՐՈՒՄԵԱՆ,
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՄԻՍԱՔ ՄԵՆԱՐԵՆՅ

Հիմնադիր. Կ. Ս. ԻԹԻՒՆՃԵԱՆ: Արտօնատ. ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ

«ՄԱՍԻՍԻ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ամասիաէն կը գրեն մեզ. —
«Ամասիա, որ զոյգ մը Աղգ. երկսեռ դպրոցներէ և երկու մանկապար-
տէզներէ զատ ունի նաև անհատական երկսեռ վարժարան մը և ման-
կապարտէզ մը, անմասն չի մնաց յաջող հանդէսներէ: Ամանորի առթիւ
Հայ-Բողոքականներուն Աղջ. Վարժարանի հանդէսը տեղի ունեցաւ:
Վերջերս Ս. Յակոբ եկեղեցիի Աղգ. մանկապարտէզի հանդէսը սարքուե-
ցաւ, ուր Ամասիացի ծնողքը դիտեց իր զաւակներուն համարձակ շար-
ժուածեւերը և նոյնքան ալ շնորհալիօրէն արտասանած դպրոցական կտոր-
ներն ու երգերը: Երրորդը և վերջինը հանդէսներուն՝ կատարուեցաւ
Իրրանոսեան առեւտրական վարժարանի մանչերու բաժնին մէջ, ուր
երկսեռ աշակերտներու կողմէ յաջորդաբար արտասանուեցան աւուր
պատշաճի կտորներ, փառքիկ դպրոցական տրամախօսութիւններ: — Կար-
ծես բաւական չըլլար կատող շուներու վտանգը և ահա կարիքախոր
ծայր տուաւ, որուն զոհ գացին ամէն աղգէ 200է աւելի մանուկներ:
Սակայն բարեբաղդաբար պզտիկներու, նոյնիսկ երբեմն չափահասներու
կեանքին սպառնացող այս ախտին գործած նախճիրները կերպով մը կա-
րելի եղաւ կասեցնել՝ շնորհիւ շոպլուած նախազգուշութիւններու և
բժշկական ու առանձին խնամքներու: — Յուն. Յին Ս. Աստուածածին
եկեղեցիին մէջ Տօք. Երեմիաի և Ս. Յակոբ եկեղեցիին մէջ Տօք. Բա-
րուակ Էֆ. ներս բժշկ. բանախօսութիւնները քիչ ազդեց ութիւն շունեցան.
յարգելի ըմբիշները բարեխրական գաղափարով մը տոշորուած՝ օրուան
հիւանդութեան պատմականին, ախտանշէրուն, կանխազգուշութիւն-
ներուն և դարմանին վրայ խօսեցան ամէնուն հասկնալի լեզուով մը:
— Այն օրէն որ Գեր. Տ. Սահակ վարդապետ հետզհետէ պատրիարքա-
կան և տաջնորդական տեղապահ և յետոյ փոխանորդ նշանակ-
ուեցաւ Ամասիա-Մարդուանի, — թող իր եկեղ. նոր կարգադրու-
թիւններն ու օգտաշատ ձեռնարկները, զիսանը շատ աւելի կանոնա-
ւոր կազմակերպութիւն մը ունեցաւ: Հ. Սուրբը որ իր կիրակնօրեայ
քարոզներովը և հինգշաբթիէ հինգշաբթի երեք եկեղեցիներուն մէջ ալ
հաւասարապէս կիներուն համար խօսած սարքերական խրատականներովը
կուրախացէր ունկնդիրները, այս անգամ ալ Ամանորի, Ս. Ծնունդին,
(տեղացիները Ծնունդին Չատիկ և Չատիկին ալ Մեծ Չատիկ կ'ըսեն)
Անուանակոչութեան և Նոր Կիրակիի առթիւ հաւատացեալներու խումբ
բազմութիւնը լեցուց իր բարի յորդորներովը: Տեղիս և Մարդուանի
աղքատախնամները, չարթէ չարթի ամէն խանութ պտտելով՝ բաւական
նշանակելի գումարներ կը հաւաքին և կը բաշխեն կարօտեալներուն:
— Օրիորդներու թէ կիներու հետեւելու արժանի նոր արհեստ մըն ալ. մեր
մէջ վհուկներ ջատուկներ չեն պակսիր Աստեց շարքին վրայ վերջերս աւել-
ցած է նաև 14 տարեւ գեւառի օրիորդ մը, որ վայրկեանաբան ներշնչումէ
մը թելադրուած իբր թէ իրեն ներկայացող ամէն կարգի հիւանդներուն
մէջ մէկ դարմաններ կը յանձնարարէ, թագուն ցուեր երեսուն կը հանէ
և դեռ խնդ մը ուրիշ ախեղցփեղ պատգամներ կ'որոտայ 40 փարայի

վոխարէն(?) : Գնահատելի է օրհացի կարօտ աղջկան՝ հացի պայ-
քարին մէջ ցոյց տուած այս տարօրինակ եռանդը, թէեւ եղանակը ոչ շատ
յանձնարարելի. բայց եթէ շահեկան բան մը կայ իր այդ տարօրինակ
արարքին մէջ, այն ալ ստայօղ տարածայնութիւններու շնորհիւ իր նիւ-
թական ներկայ անձկութիւնը բարեօքելէ դատ սողադային համար ալ...
օժիտի պատրաստութեան պէտք եղած դրամը կարենալ աւելցնելն է :
Զարմանալի չէ՞ք գտնել շահագիտական այս նոր ձեռնարկը» :

Ս. Կ. Մարիկեան

Երզնկայէն կը գրեն մեզ. — Երզնկայի Բրիտանեան վարժա-
րանը. — Քաղաքիս չորս եկեղեցիներն ալ իրենց շրջափակին մէջ ունին ման-
չերու զատ վարժարաններ, բայց աղջիկներու համար մէկ վարժարան միայն
կայ, Բրիտանեան անուանով, բայց Ս. Փրկչի թաղին աղջիկներու բա-
մինէն : Բրիտանեան վարժարանը մօտաւորապէս քառասուն տարուան
մը գոյութիւն ունի. իր ներկայ շէնքին հին մասը Գրիգորիս եպիսկոպոս
Ալէքսիանի օրով շինուած է : 1873 թուականէն յետոյ, վարիչ չորս
ուսուցչուհիներ յաջորդարար կը պաշտօնավարեն : 1897ին պաշտօնի կը
կոչուի արդի Տեսուչը՝ Պետրոս Էֆ. Փողարեան և դործի կը սխի հազիւ
130-150 աշակերտուհի ունենալով : Փողարեան Էֆ. անմիջապէս մանկա-
պարտէզի մը բացման կը ձեռնարկէ, նախ Օր. Հաւնուրիի և յետոյ Տի-
կին Եսթեր Չուգուրեանի վարչութեան տակ : 1900ին գորդադործարան
մը կը բացուի վարժարանին հին շէնքին գեանայարկին մէջ, և Սեբաս-
տիայէն ալ ուսուցչուհի մը կը բերուի : Դժբախտարար 21/2 տարի անեւ-
դութիւն մը կ'ունենայ և անյաջողութեամբ ու նա թական կորուստով
կը վախուի : Վարժարանին աշակերտուհիներուն թիւն է 400-420 : Զրի
աշակերտուհիներուն թիւն է 120-140, Տարեկան պիւտճէն է 100-180
ռսկի. ներքին պաշտօնեաներու թիւն է 15 (2 ուսուցիչ, 13 ուսուցչու-
հի). իսկ Հոգաբարձութիւնը կը բաղկանայ 7 անդամէ (Տեսրք Տօքթ.
Տիգրան Փախաղեան, Գարրիէլ Նազաճեան, Յովհաննէս Վարդապետ-
եան, Աբգար Բարսեղեան, Հմայեակ Լաճիկեան, Զարմայր Սանդիկեան,
Տիգրան Աշըգեան, Ունի նոսե հինգ Տիկինէ բաղկացած խնամակալուհի
մարմին մը և հինգ երիտասարդէ կազմուած նպաստաւատոց Յանձնա-
ժողով մը : Տեսուչ, Պետրոս Էֆ. Փողարեան, ուղղափառ, պարսաճա-
նալ և կարող անձ մըն է : Արդի պիւտճէին վրայ գէթ 100 ռսկի յաւե-
լումի պէտք կայ, Հոգաբարձութիւնէն կը սպասուի որ այդ գումարը
գոյացնելու միջոցներուն վրայ խորհի և գոհացում տայ նոր պաշտօնեա-
նեբու պէտքին : Դիտող. — Խարբերդէն կը գրեն մեզ. — Մարտ 1ին
Եփրատ Գօլէճի Տնօրէն Մր. Րիկս գօլէճին մէջ շահեկան բանախօսու-
թեամբ մը երկրաշարժին զիժերը, արդիւնքը և պատճառը թուեց. ինք
իր սենեակին մէջ երկրաշարժի դօրծիք մը շինած էր՝ որմէ կը հաս-
կցուէր թէ, 1907 Յուն. և Փետր.ի մէջ 22 անգամ երկրաշարժի
ցնցումներ անգլի ունեցեր են Խարբերդի մէջ» :

Համբարձում Թիֆեկեան


ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

ներու, միդային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դադիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորոգոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարժի օրերը միայն ձրի:

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտա, ճանաչողի տարար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միդային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դադիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորոգոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարժի օրերը միայն ձրի:

(8-10)



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկորեկի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժողովութեանց և տաղատկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և զիրագործածելին բլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն օր Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ	ԿԱՍԻԱԹԱ.	1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343.
	ԲԵՐԱ.	2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւժին դէմ,
	ՊԱՆԱՏԱՆ.	1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
	ՍԵԻՏԱՐ.	2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
		1. Սուլթան Համամ.
		2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
		Զարչը Պօյու, Թ. 120.
		Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

(9-10)

ՄԱՍՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և զաւաններու համար տարեկան

6 դրշ :

Արտասահմանի » »

11 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին տասնապիս մեր պարգևներէր, միշտ ճիշտարար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասին բաժանորդագրութիւնը թողործարողն իրանիկ է :

Զննադրական և ձեռագիրները եւ չեն գործարար :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍՍԻՍ»Ի

Գուրուխու խան, քիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼ Ս

در علم غلط، قورشونلی خاندە نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره خاندە

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ԿԻՆԸ

ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՏՈՒԻՆ ԿԱՐՇԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատճառներու ամփոփումը մը կը ներկայանայ ենով Արմէն : Այս զիւնով չէ՝ որ պիտի հաստատէր սա համարութիւնը քէ իր գրագրացի : Մնաստիկի կարողութիւններուն կը միացնէ վիպորի արդանորդ :

Եւ ինքն իր գրական արժեքէն, այսպէսով սեռակէտով ալ ուշագրաւ նորութիւններ կը պարունակէ : ճաշակաւոր ու սիրուն հասար մըն է, որ, փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կործանել :

Ենով Արմէն (Եւրոպիէն մէջ) կ'զգուշանայ այն միտ գրականութենէն, կ'զգուշանայ ամբողջ մեծ սեռակներու վարագործներուն ետին դալկացող կեանքէն : Իր ուզածը դուրսի կեանքն է, կեանքը, գլխաւորով արեւին ճալիքը, իր յորդ այլազանութեան մէջ : Եւ նաեւ, իր մօտ փառարանող մը կայ : Դարկապիքն սկզբնական վաղեմական բնագոյններուն, զոր երկինք կը հասնէ, գլխաւորով մը : Ենով Արմէն յատուկէն sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ եւ է անպարկեշտութեան :

Անուշտ ումէն գրասէր պիտի փափաքի ունենալ ենով Արմէնի այս հրահարակութիւնը, Եւրոպիէն, գրական զեղեցիկ վայելք մը յոյսովսնելու համար :

Եւ ինքն, հեղինակին գրչի այդ առաջնէկ զաւակը, նորութիւն մըն է իր յղացումը :

Եւրոպիէն իր գրական արժանեքին կը միացնէ այսպէսով մը հիմնապէս անքիսիք ու բոլորովին նոր հասակով, որ կը յաւկանցէ Եւրոպիէն համակրելի հեղինակը :

Եւրոպիէն հեղինակը, որուն գրութիւնները այնքան հանդիմանալի կը կարդացուին օրա-քերթերուն եւ ուսմանական հանդէսներուն մէջ, այս անգամ իր մտածումները խառնուցած է սիրուն ու կոկիկ հասարի մը մէջ, որուն այսպէսով, բոլորին ազնուութիւնը եւ զեղեցիկ հասակը հանդիմանալի կը պարգեւէ : Բնութեան անկէ հաս մը : Զերմապէս յանձնարարելի է այս գոյսիկ հասարը :

Իր բնութեան հանգամանակով Եւրոպիէն կարդացուելու արժանի զիւն մըն է յոյսովսնելու աշխատութիւններէն հեղինակին :

Գին 5 դրուշ : Կը զանուի ամէն գրականութի ջով :